ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Չեխիայի Հանրապետություն (Պրահա) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**

   Արուս Աթանեսյան.

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչության ինտեգրված սոցիալական ծառայությունների բաժնի փորձագետ.

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Չեխիայի Հանրապետություն (Պրահա), 2024 թվականի դեկտեմբերի 3-ից 5-ը.

4. **Հրավիրող կողմը.**

   Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն.

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն «Վերադարձի և կայուն վերաինտեգրման խթանում» թեմայով աշխատաժողովին:

6. **Քննարկված թեմաները.**

   - Աշխատաժողովի առաջին օրը նվիրված է եղել Պրահյան գործընթացի գործողությունների ծրագրի (2023-2027) շրջանակներում նախանշված գործողությունների, մասնավորապես՝ հարկադիր և կամավոր վերադարձի գործընթացների քննարկմանը, ազգային և տարածաշրջանային հեռանկարների ու փորձառությունների ներկայացմանը, ինչպես նաև պետությունների կողմից

իրականացվող քաղաքականությունների, դրանցում առկա խոչընդոտների ու կարիքների վեր հանմանը:

- Աշխատաժողովի երկրորդ օրը ներկայացվել և քննարկվել են ազգային և տեղական մակարդակներում վերաինտեգրման ոլորտում իրականացվող քաղաքականությունները, ծրագրերը: Խոսվել է նաև հետընդունման համաձայնագրերի և դրանց կիրարկման արձանագրությունների կատարման ընթացքի մասին:

- Աշխատաժողովի երրորդ օրը նվիրված է եղել մասնակից պետությունների միջև փորձի փոխանակմանը

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Վերոնշյալ թեմաների շրջանակներում հանդիպումներ են կազմակերպվել, մասնագիտական քննարկումներ և փորձի փոխանակում է իրականացվել ոլորտային ներքոնշյալ կառույցների ներկայացուցիչների հետ.

- ✓ Չեխիայի Հանրապետության ներքին գործերի նախարարություն"
- ✓ Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն"

Ներկայացրել եմ վերադարձի և վերաինտեգրման ոլորտում հայաստանյան լավագույն փորձը: Աշխատաժողովի ժամանակ խոսել եմ վերադարձի և վերաինտեգրման գործառույթները ՀՀ ներքին գործերի նախարարությունից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության փոխանցման, մշակվող ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման ռազմավարության 2025-2026թթ, պետական և ոչ պետական աջակցության ծրագրերի, ինչպես նաև հատկացվող աջակցության տեսակների մասին: Մասնակցել են նաև խմբային աշխատանքների ընթացքում տեղի ունեցած քննարկումներին, ներկայացնելով՝ վերադարձի և վերաինտեգրման ոլորտում լավագույն փորձը և առկա մարտահրավերները:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպումների ընթացքում ֆորմալ որոշումներ չեն կայացվել, կողմերը փոխանակվել են կոնտակտային տվյալներով՝ հետագայում, ըստ անհրաժեշտության, կապ հաստատելու նպատակով:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկվել է շարունակել մասնագիտական համագործակցությունը՝ վերադարձի և վերաինտեգրման, ինչպես նաև ինտեգրման ոլորտներում՝ ըստ անհրաժեշտության:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Արուս Աթանեսյան **11/12/2024**